

Միջինարեւմտեան միաբանութիւնը հայ ազգին եւ ինչ դեր է կատարել նա մինչեւ XIX դարի առաջին քառորդը հայոց պատմութեան եւ գրականութեան մէջ, դասախօսը ասաց, որ Վենետիկի Միջինարեւմտեան միաբանութիւնը, Վիեննայի ճիւղի հետ միասին, տուել է հայ ազգին ոչ միայն ազգային, այլ եւ եւրոպական համաւճիւղ վայելող ուսումնականներ գիտութեան զանազան ասպարէզներում, ինչպէս, օրինակ, պատմագիր Չառնախան, աշխարհագիր — հնագէտ Իսահան, լեզուագէտ Այդընեան եւ Արսէն Բագրատունցի, քննադատ եւ գրականութեան ու պատմութեան ուսումնասիրող Գաթրիճեանն ու Տաշեանն Աւգերին Այդ միաբանութիւնը տուել է եւ այնպիսի գիտնական, ինչպէս հանգուցեալ Ղեւոնդ Ալիշանն է, որին հայ ազգը անուանում է նահապետ:

Շօշափելով Միջինարեւմտեան միաբանութեան կաթոլիկ եկեղեցու հետ ունեցած յարաբերութեան խնդիրը, դասախօսը այն կարծիքը յայտնեց, որ Միջինարեւմտեան միաբանութիւնը եւ ջերմ հայրենասէր, իրան գլխաւոր նպատակ դրել էր հայ ազգի լուսաւորութիւնը, եւ հիմնելով այդ նպատակի իրագործման համար մի միաբանութիւն, նա համոզվել էր, որ այդպիսի մի միաբանութեան գործունէութիւնը հնարաւոր է միայն Մարաշի մարզում, իսկ նրա գոյութեան համար անհրաժեշտ է կաթոլիկ եկեղեցու աջակցութիւնը եւ հովանաւորութիւնը: Այդ պատճառով նա յօժարեց ոչ թէ միայն կաթոլիկ եկեղեցու գիրքը, այլ հաստատել ունի, որպէս զի հնարաւորութիւն ունենայ պահպանել ազգային եկեղեցու բոլոր յատկանիշ սովորութիւնները, ծիսակատարութիւնները, լեզուն, երգեցողութիւնը: Արարողութեան կողմից, Միջինարեւմտեան միաբանութիւնը աւելի պահպանողական հանդիսացաւ, քան նոյն իսկ էյմիթիւնը, որովհետեւ, ասաց դասախօսը, հայկական բուն եկեղեցական երգեցողութիւնը իր ամբողջ մարտութեամբ պահպանվել է միայն Վենետիկում եւ Սեւանում:

Դասախօսութեան երկրորդ մասը վերաբերում էր Ալիշանին, նրա կենսագրութեան եւ նրա գրական աշխատութիւնների լուսաբանութեան: Ընկերութեան անդամները վերին աստիճանի հետաքրքրութեամբ քննեցին, ձեռքից ձեռք անցկացնելով, Ալիշանի «Սիւսական, Սիւսուան եւ Այրարատ» հատորները, որ դասախօսը բերել էր հետը ցոյց տալու համար:

Երբ դասախօսութիւնը վերջացաւ, ժողովը յարգեց հանգուցեալ Ղեւոնդ Ալիշանի յիշատակը ոտքի կանգնելով, ապա նախագահ Լամանսկին, զիմելով դասախօսին, չնորհակալութիւն յայտնեց Աշխարհագրական ընկերութեան կողմից եւ խնդրեց թոյլատրել տպագրել գեղարուեստական ընկերութեան տեղեկագրի մէջ, որպէս զի բոլոր անդամները, ասաց նա, հնարաւորութիւն ունենան ծանօթանալ այդպիսի բազմաբեղուն գիտնականի գործունէութեան հետ:

Գ. Հ.

ՆԱՄԱԿ ԱՍՏԻԱՆՆԻԹ

Մայիսի 6-ին

Տիկին Սիրանոյշի խումբը տուեց երկու ներկայացում: Խաղացին «Կեանքի արժէքը» եւ «Իդէալ»: Այս երկու ներկայացումն ընթացքում մեր առաջին անգամ խմբի բոլոր անդամները: Բոլորի խաղից մի արդիւնք երեւաց, այն, որ այս անգամ խումբը կազմված է ամենալաւ ոյժերից: Մի կողմ թողնելով հայ բեմի անթաւառ ծաղիկ Սիրանոյշին, քանարաւոր Պետրոսեանին, երկար ծառայած տիկին Փառանձեմին, իրանց խաղով աչքի են ընկնում տիկ. Մայսուրեան, Ստեփանեան, Աւետեան: Նորերից անպայման լաւ ապագայ է խոստանում Չառնաֆեան: Լաւ ոյժ է նաեւ Ալիսանեան, միայն կարծեք ոչ պատմական, այլ կեանքի պիեսներում է ոչ էլ մեծ գերբերում: Գիշ. բայց լաւ — ասում է գերմանական առածը: Կան եւ ուրիշներ, որոնք յարմար են իրանց դերերին, մի խօսքով՝ խմբի կազմակերպութիւնը պատիւ է բերում թէ իրանց գերասաններին եւ թէ տիկին Սիրանոյշին, որը այս անգամ աւելի զոհաբերութիւններ է արել աստղախաղների բաւականութիւն տալու եւ հետեւապէս ըստ արժանի գնահատելու:

Իսկապէս ով իր ոյժերը զոհում է հասարակութեան պէտքերին, նա իրաւունք ունի սպասել քաջակերպութեան, գնահատութեան հասարակութեան կողմից: Իսկ այս անգամ Աստղախանի հայ հասարակութիւնը դեռ չէ զգում այդ պարտականութիւնը: Նա դեռ երկու ներկայացումն ընթացքում եւս յամառութեամբ

չարունակում է թատրոն չը գալ եւ մի այդպիսի կանոնաւոր խումբ խաղում է դատարկ թատրոնների առաջ՝ ի նախատինս աստղախաններին եւ ի ինչաւ իր գրականի Ուրմիացին անցնել տարվայ հիացմունքը, օգտինհանքը, բուն ոգեւորութիւնն ու ընծաները: Պատճառաբանում են — գործերի անաջողութիւնը, ժամանակի անյարմարութիւնը եւ այլն: Բայց մտքը զանազան դուարձատեղիներ — ակումբներ, այգիներ, օպերա, Դուբովի ցիւրկ, կաֆէ-շանտաններ, բաց բեմեր եւ այլն, դուք կը տեսնէք, որ մեր հայերի համար այլ եւս գոյութիւն չունի ոչ գործերի անաջողութիւն, ոչ ժամանակի անյարմարութիւն: Ուրիշներ է, որ չաղ են տալիս զանազան Պարսիկաների, Ժուլիների առաջ, չափային գետններ են հոսեցնում զեղի կերտիւմի սեղանների վրա, երբ չըջապատված են երգչուհիների խմբերով: Թըղթախաղ սեղանների վրա տանում են տալիս վերջին հացի զինն անգամ: Իսկ երբ հերթը գալիս է գնահատելու հայ տաղանդաւոր արուեստագիտ, վարձատրելու հայ բեմի աշխատակորներին ու չնորհալի դերասաններին, այն ժամին կամաւոր աղքատներ են ձեւանում, գործերի անաջողութեամբ են արդարանում: Ժպտում են, զծուծ, հաշող, պատճառանող, պիւս արա վրա եւ սառնասրտութիւնն ու անտարբերութիւնը դէպի հայ բեմն ու լեզուն:

Առ այժմայ այս չափով բաւականանալով, դեռ յոյս եմ տալիս, որ Աստղախանի հայ հասարակութիւնը կը զգայ իր սխալը եւ կը շտապի վարձատրել իսկապէս գնահատելի հայ բեմի աշխատակորներին, մանաւանդ անգուղական տաղանդ տիկին Սիրանոյշին, որը իր բեմական գործունէութեամբ 30 տարիների անխնայ դափնիներ ունի: Ուրեմն, յուսանք, դեռ խումբը մինչեւ յունիս մեզ մօտ հիւր կը լինի:

Թատերասէր

ՆԱՄԱԿ ԲԱՆԱՆՆԻԹ

Մայիսի 3-ին

Հինգշաբթի, ամսի 2-ին, Բալթիստի սիրողների խումբը տուեց իր երկրորդ ժողովրդական ներկայացումը — «Բաղդասար Աղբար» եւ «Մկնիկ»: Դասիճը ծայրէ ի ծայր լինել էր, բայց, զգալի դաբար, տեղ չը լինելու պատճառով, ուղղակի կարելի է ասել, որ հարկաւոր մարդիկ դատարկաձեռն յետ դարձան: Այս երկու ներկայացումները, որպէս մի լաւ փորձ, արդէն ցոյց են տալիս, որ ժողովրդական ներկայացումները ուղղակի պահանջ են տեղի աշխատաւոր դասի համար:

Մտնում էք դահլիճ, նայում ձեր շուրջը, գրեթէ առանց բացառութեան բոլոր տեղերը բնված են բանտներով եւ արհեստաւորներով եւ նոյն իսկ աչքի են ընկնում հասարակ դասի կանայք: Այս երկու թիւնքն ըստ ինքեան արդէն ոգեւորիչ տպաւորութիւն է գործում մարդու վրա:

Բայց մի նշանաւոր խոչընդոտ արգելք է լինում, որքան մենք նկատեցինք, թէ հասարակութեան որոշ չափով բաւականութիւն տալու եւ թէ սիրողներին մի փոքր ազատ շարժելու, դա դահլիճի չափազանց փոքրութիւնն է եւ բեմի աղքատութիւնն ու անյարմարութիւնը, մի էական խնդիր, որը որքան շուտ լուծվի, այնքան աջող կը գնայ գործը: Ինչպէս լսեցինք, նաւթարդիւնաբերողների վարչութիւնը, յանձին պ. Ա. Մատուրեանի, եւ սիրողների ընտրված յանձնախումբը ամեն կերպ աշխատում են տեղ կամ այլ շինութիւն գտնել աւելի յարմարաւոր, սեպտեմբերից սկսվող ներկայացումները այնտեղ տալու, նոյնպէս եւ ապագայ բացվելու ընթերցարանը եւ թէյարանը գետեղելու:

Ներկայացումը ընդանրապէս անցաւ բաւարար եւ նոյն իսկ լաւ, աչքի առաջ ունենալով այն սուղ միջոցները եւ մեծ անյարմարութիւնները, որոնց մէջ գտնվում են սիրողները: Այն, իսկապէս գործողութիւնը մեծ է սիրողների, երկրորդ, եւ գլխաւորը, նրանք հաւաքվում են Բալթիստի զանազան հեռաւոր ծայրերից միշտ կրկնութեան եւ ուշ գիշերով վերադառնում են իրանց տեղերը, նոյն իսկ արհամարհելով վտանգը, որը մեզանում այնքան էլ անսպասելի չէ: «Բաղդասար Աղբար» մէջ առանձնապէս աչքի էին ընկնում պ. Չարդախան, որ ստացաւ մի համեստ ընծայ, Տ. Վարդանանը — Շուշանի դերում, որպէս թիւրքահայ, բաւական տիպիկաւորաւոր էր թէ իր արտաբերումը եւ թէ լեզուն տիրապետելով: Լաւ էր եւ Տ. Մկրտչեան: Անհամեմատ կենդանի անցաւ «Մկնիկ» փոքրվիլ շնորհիւ Տ. Ա. Մանուկեանի, որը ուղղա-

կի տիրապետում էր իրան բեմի վրա եւ այնքան կենդանի ու սահուն էր տանում, որ մոռացնել էր տալիս, թէ մի սիրողն էր բեմի վրա: Չնորհաւորելով յարգելի տիկնոջը իր անդրանիկ մասնակցութեան մէջ գտած յաջողութեան համար, ցանկալի է միշտ տեսնել նրա նման ինտելիգենտ ոյժերը հրապարակ իջած, մանաւանդ, որ կանանց ոյժեր, ինչպէս մեզ ասացին, շատ դժուար է գտնել: Ի բոլոր սրտէ ցանկանում ենք աջողութիւն նոր ստեղծված հանրագում գործին:

Էլի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Այսօր, մայիսի 14-ին, Նոցա Մեծութիւններ թագաւոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի եւ թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Գեորգովնայի թագաւորութեան տօնի առիթով, ուսաց դիմաւորական-Ալեքսանդր-Նեվսկի տաճարում, ինչպէս նաեւ միւս դաւանութիւնների եկեղեցիներում եւ աղօթատեղիներում տեղի կունենան պատարագ եւ գոհացողական մաղթանքներ: Գաղաքը առաւօտվանից զարդարված կը լինի զբօսակներով եւ երեկոյեան — լուսավառված:

Թագաւորութեան տօնի առիթով «Մշակ» հետեւեալ համարը լոյս կը տեսնէ հինգշաբթի, մայիսի 16-ին:

Կիրակի, մայիսի 12-ին, Թիֆլիսի Կուկիայի կաթոլիկաց Պօղոս-Պետրոս եկեղեցում, պատարագից յետոյ, տեղի ունեցաւ հոգեհանգիստ Կարա-Մուրզայի մահվան քառասունքի առիթով: Պատարագին երգում էր Ս. Նշան եկեղեցու երգեցիկ խումբը, որ պատրաստել էր հանգուցեալը: Հոգեհանգիստին հաւաքվել էին բաւական թւով յարգողներ:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերութիւնը ներկայումս պայմանաւորվում է հայ դերասանների հետ միայն մինչեւ յունվար ամիսը: Մտադրութիւն կայ տալ 24 ներկայացում՝ երկուշաբթի եւ երեքշաբթի օրերը: Ներկայացումները կը սկսվեն սեպտեմբեր ամսից: Բազում կազմվում է մի ուրիշ դերասանական խումբ, որը նոյնպէս պէտք է սկսէ իր ներկայացումները այնպիսի:

Կիրակի, մայիսի 12-ին, քաղաքային դուժայի դահլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի արհեստաւորների գլխաւորի ընտրութիւնը, որ խիստ հետաքրքրական էր: Դեռ առաւօտեան ժամի 10-ին Վերամիսովսկայա փողոցը լցված էր արհեստաւորների խմբերով, որոնք անհամբեր սպասում էին ընտրութեան հետեւանքին: Ժամի 12^{1/2}-ին դուժայի դահլիճը լցվեց ընտրող պատգամաւորներով, ամեն մի համարից 3 հոգի: Դահլիճի վերնատունը լցված էր եւ կողմնակի անձնաւորութիւններով: Ընտրողների խմբերը խիստ լարված էին միմեանց դէմ՝ ամեն մէկն ունենալով իր թեկնածուն: Ընտրողներին երգչուհիներու համար եկել էին՝ ուսաց եւ հայոց քահանաները եւ հրէաների ուսուցիչներ: Նախ ուղղափառներին երգեցողից ուսա քահանան, մի արկութիւնը վերջացաւ ժամի 5-ին: Զայնքի անաղին մեծամասնութեամբ՝ արհեստաւորների գլխաւոր նորից վերընտրվեց Կարապետ Սերովբեանց, որը վեց տարի է ինչ վարում է այդ պաշտօնը:

Շաբաթ, մայիսի 11-ին, Թիֆլիսի Արտիստական թատրոնում տեղի ունեցաւ օր. Բուկչտէյնի կօնցերտը, որին մասնակցում էին դերասանուհի Պապիսովա, երգչուհի Լալովա, երգչներ Բրօյի եւ Բարաթով, ջութակահար Յէյտլին եւ վիօլօնչիստ Դօրթոսով: Կօնցերտը զբաւել էր բաւական մեծ բազմութիւն եւ կրում էր ուրախ, ընտանեկան բնաւորութիւն: Օրիորդ Բուկչտէյն — դրամատիկական սօսքաւոր է, ուսել է Պետերբուրգում եւ իտալիայում, ունի ոչ ընդարձակ, բայց գեղեցիկ եւ մաքուր ձայն, ցոյց է տալիս երաժշտական արհեստի գիտութիւն, սակայն դեռ երգում է անհամարձակ եւ անվստահ: Նա բաւական աջող երգեց «Սեմիլան» սփրիչի: Ռօզինայի երգը, որի մէջ կան բարդ եւ դժուար կտորներ: Տիկին Պապիսովա մեծ հմտութեամբ կարգաց մի շարք ոտանաւորներ եւ ցոյց տուեց իր խելացի եւ զգացված արտասանելու աչքի ընկնող տաղանդ: Երգչուհի Լալովա սիրուն եւ ախորժիկ ձայն ունի, որը մշակել է բաւարար կերպով եւ աջող կերպով երգեց Բուկչտէյնի «Գիշեր» եւ Բուկչտէյնի «Կօրսակովի»: Մեզուրօզկա օպերայից:

Բրօյի արդէն յայտնի է մեր ընթերցողներին, նրա երգը յիշեցնում է մի երգեցիկ ոտանաւոր կամ խօսակցութիւն, բնորոշ չեչուերով: Բարաթով սկսնակ է, ունի ախորժիկ ձայն, պարզ արտասանութիւն, բայց դեռ պէտք է մշակել երգելու արհեստը: Զուլթակահար Յէյտլին իր նուրբ եւ գեղեցիկ խաղով մեծ հաճութիւն պատճառեց հանդիսականներին: Վիօլօնչիստ Դօրթոսովում աջող կերպով նուազեց երկու կտոր: Կօնցերտի աջողութեամբ շատ նպաստում էր իր հմուտ ներդաշնակելով նուազողուհի Սյոզնշտադտ: Կօնցերտին մասնակցողները ստացան բազմաթիւ փունջեր եւ բուն ծափահարութիւններ:

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան համար ստացանք պ. Նշանայի 3 ռուբլի, Մ. Էյ 1 ռ. եւ Գ. Էյ 1 ռ., իսկ նախկին ստացածների հետ միասին 221 ռ. 50 կոպէկ:

Կիրակի երեկոյեան, մայիսի 12-ին, իւրանուհի Թումանյանի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ հայ թատերասերների նախապատրաստական ժողովը, որ գրաւել էր երկու սեռի բաւական մեծ բազմութիւն: Թատերասերների նպատակն է առաջիկայ սեզոններին սիրողների պարբերական ներկայացումներ տալ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Կազմվեց ժամանակաւոր ընտրողական ներկայացումների պատասխանատու ղեկավար է իշխ. Թումանյան, իսկ ընտրողը՝ պ. Ա. Բաքսեան:

«Կաբաթ» լրագրին հետագում են Պետրուրդից: «Թոյլ է տրված մասնաւոր անձերին գնել, իբրեւ սեփականութիւն, պետական արհողաբաժինները, որոնք գտնվում են Զերնօմօրեան եւ Գուլիսիի նահանգներում եւ որոնք տրված են նրանց գիւղատնտեսական կանոնադրութեան հիման վրա: Բացի արանց հրատարակված եւ կանոններ, որոնցով կողմատու պետական հողաբաժիններ են տրվում մասնաւոր անձերի, որպէս զի նրանք այդ հողաբաժինների վրա տեղեկն այգիներ, պարտէզներ եւ առանձնապէս զին ունեցող բազմաթիւ տուններ:

Երկրագործութեան եւ պետական կալուածների միմիայն թոյլատրեց գիւղատնտեսական կրթութեան ասպարէզում գործողներին տեղական չըջապային համաժողովներ կազմակերպել պարբերաբար եւ յանձնարարեց երկրագործութեան ղեկավարման ծրագիր կազմել այդ համաժողովների համար:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, թէ հակառակ տարածված լուրերի, Պետրուրդի պոլիտեխնիկումի բացումը տեղի կունենայ այս տարվայ այնպիսի:

Թիֆլիսի ոստիկանապետի հաշիւ մէջ, որ նա մօտ օրերումս ներկայացրել է նահանգապետի պաշտօնակատարին, կան հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւններ: Թիֆլիսի վիճակագրութեան վերաբերմամբ: Անցեալ 1901 թ. Լաւանի ընթացքում Թիֆլիսի առեւտրական արդիւնաբերական տեղեր թիւը հաւասար էր 4,187-ի, իսկ նրանց գումարները տարեկան չըջանադարձութիւնը — 24,699,716 ռուբլում: Ամեն տեսակ գործարաններ կային Թիֆլիսում նոյն թւականին 204 հատ՝ 11,196,682 ռուբլում: արդիւնաբերութեամբ: Բանտ. օրերի թիւը այդ գործարաններում հասնում էր 4,053-ի: Անցեալ ընկալութեան թիւը հաւասար էր 176,162-ի: Ընդամենը Թիֆլիսում կային 12,780 տներ եւ խանութներ: Ոճիւրներ եւ յանցանքներ կատարված են նոյն 1901 թւականին ընթացքում 2,059, դատաւարտված են այդ ոճիւրներն ու յանցանքները գործողներից 1761 հոգի: Բանի եւ պատահական մահվան դէպքեր եղել են անգամ, հրդեհներ — 57, Հրդեհների պատճառած վնասը հաւասար է 225,152 ռուբլում:

ՍՂՆԱԽԻԹ մեզ գրում են. «Աղանից դէպի Լազոդաղ տանող ճանապարհը, Այազան գետից սկսած՝ անցնում է ընդարձակ ձիարանձաւ տառով, որտեղ յաճախ տեղի են ունենում մարդասպանութիւններ: Զարագործները Զաքաթայի չըջանի արհեստը լեզգիներն են հանաթալարում միշտ: Երկու շաբաթ առաջ այդ ճանապարհով գնում է մի երիտասարդ ուսուցիչ պրոպագանդիստ: Երբ հետ Լազոդաղ Օֆիցերը նոր է նշանակված եղել իր պաշտօնում եւ գնալիս է եղել Լազոդաղի Լօռու գնդում ծառայելու: Անտառում նրանց ճանապարհը կըտալի:

րում են լեզուի աւագակներ եւ պահանջում են փոքր Օֆիցերներ արձակում է ընկալելու Մի աւագակ կատարած արձակում է հրացան եւ սպանում երիտասարդ զինուորականին իշխան սպանում խառն հրամայեց գտնել աւագակներին Զաքարյայի Ղաթախ լեզուների գիւղում գտնել եւ կախնաւորել են երեք աւագակներին, որոնց ուղարկել են Զաքարյայ Նրանց կը դատեն զինուորական դատարանով Առում են, որ մէկ աւագակին գտնել են սպանված անհետ, որին կարծում են, թէ իր ընկերներն են սպանել հիւանդ լինելու պատճառով:

ԲԱԼԱՍՏԻՆԻՑ մեզ գրում են. «Բալաստինում մի խումբ ինտելիգենտներ ետանդուն պատրաստութիւններ են տեսնում արժանաւոր վայել կերպով մասնակցելու Ղազարոս Աղային 40-ամեայ զրական գործունէութեան յօրինակին: Գործի գլուխ կանգնած նախաձեռնողն է ինժեներ-տեխնիկ Սերով Բալաստինցն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՑ
Վիլհելմ կայսրի երախտագիտութիւնը

Բերլին, մայիսի 15-ին

Էլզաս-Լոտարինգի... Մի ամբողջ պատմութիւն է կապված այդ անունն հետ—պատմութիւն, որն այնքան դառն յիշողութիւններ է պարունակում ամեն մի հայրենասէր ֆրանսիացու համար:

Կար ժամանակ, երբ այդ լայնարձակ դաւաճող միացած էր մայր Ֆրանսիայի հետ եւ կազմում էր նրա հետ մի ամբողջութիւն, մի մայր միւս Սակայն եկաւ ֆրանս-պրուսական պատերազմը (1870—71), այդ մարմինը կտրեց մի պատու եւ յանձնեց «գերմանական Միլիթար»:

Ճիշդ է, այդ օրվանից գերմանական հպատակներ զարման էլզաս-լոտարինգիները, բայց նրանք իրանց ամբողջ սրտով եւ հոգով ֆրանսիացիներ մնացին: Ընդհակառակը, օտար լուծը աւելի ու ժողովրդեցիկ նրանց սէրը դէպի մայր-հայրենիքը—Ֆրանսիան եւ նրանց հակակրօնութիւնը դէպի գերմանացիները:

Գերմանիան, ի հարկէ, շատ լաւ հականում էր այդ իրողութիւնը, ուստի եւ իբրեւ նախադրուածութիւն, արտակարգ օրէնքներ հրատարակեց այդ նահանգի համար, օրէնքներ, որոնք ամեն կերպ ծնչեցին գերմանական պատակ ֆրանսիացիներին, ամեն կերպ սահմանափակեցին նրանց քաղաքացիական իրաւունքները:

Էլզաս-Լոտարինգիան Գերմանիայի խորթ զավակն էր եւ այդ զավակին միշտ երկրիդի ու հյու հպատակութեան մէջ պահելու համար օրէնք կատարեալ լիազօրութիւն էր տալիս երկրի կառավարչապետին (ober-präsident=Staatthalter) — «ընդհանուր ապահովութիւնը պաշտպանելու համար ձեռք առնել ամեն տեսակ միջոցներ: Նա իրաւունք ունի վտանգի ժամանակ պատերազմական դրութիւն հռչակելու եւ այդ դրութեան համապատասխան խառնութիւնները գործադրել...»:

Ինքզրութիւն, միայն մի բան է դա, բայց բնականութեան մի ամբողջ աղբիւր է թափված այդ բառի ետեւը Պարզ է, ուրեմն, թէ ինչու էլզաս-լոտարինգիներն ամեն կերպ աշխատում էին ազատվել այդ չարաքառտիկ բառից, ազատվել այդ արտակարգ օրէնքներից...:

Այն, աշխատում էին նրանք, խնդրում էին, բայց միշտ էլ նրանց խնդրը մնում էր միայն «ձայն բարեառոյ յանապատի»:

Երեսուցից աւելի երկար ու ձիգ տարիներ անցան մինչեւ որ վերջապէս նրանց արդար խնդրը իր կէտ նպատակին հասաւ:

Ամսի 10-ին արձակած հրովարտական Վիլհելմ կայսրը իր խորթ զավակին—Էլզաս-Լոտարինգիային ազատում է այդ արտակարգ դրութիւնից, գերելով:

«Ես ձայն պայքարի չորհրդի եւ համողութեան, որ Էլզաս-Լոտարինգիայում հետզհետեւ ուժեղանում է լոյսով մտածողութիւնը, հետզհետեւ աւելանում է ազգայնականութեան հպատակութեան զգացումը եւ հաւատարմութիւնը դէպի պետութիւնը, ուստի եւ իմ բարեացակամութիւնն ապացուցանելու համար առաջարկում եմ վերացնել 1871 թ. հրատարակած օրէնքի § 10-ը՝ կարգաւորութեան ու վարչութեան վերաբերեալ եւ բանակցութեան մէջ նախաբերելու եւ զրա փոխարէն համապատասխան նոր օրէնք առաջարկելու դաշնակցական խորհրդին...»:

Այդպէս, ուրեմն, կայսերական հրովարտելով

որոշ թեթեւութիւն է աւետում Էլզաս-Լոտարինգիային եւ հէնց այդ պատճառով մի աչքի ընկնող երեւոյթ ներկայացնում Գերմանիայի ներքին-սօցիալական կեանքում:

Այդ երեւոյթը անագին խլրտում առաջ բերեց տեղական մամուլի մէջ: Իւրաքանչիւր թերթ, իւրաքանչիւր կուսակցութեան օրգան շտապեց իր տեսակէտով բացատրել կատարված փաստը:

Ուման կայսրի բարեփոխութիւնն են համարում երեւոյթի պատճառը, ումանք—քաղաքական հեռատեսութիւնը, ումանք էլ երախտագիտութեան զգացումները:

Աւելի հաւանական վերջինը պէտք է համարել եւ անա թէ ինչու: Միայն մի տարի սրանից առաջ Էլզաս-Լոտարինգիան համաձայնեց տալ մի խոշոր գումար (մօտ 1 միլիոն մարկ), որը գործադրվեց կայսրի մասնաւոր սեփականութիւնը կազմող ամբողջ՝ Հոնկեմիզսբերգը վերախնելու համար: Այդ ամբողջ գումարն է Էլզաս-Լոտարինգիայի սրտում Ուրեմն փառաւոր տեսք տալով նրան, էլզաս-լոտարինգիները զրանով հաւատարմութեան մի ազդու ցոյց արին գերմանական կայսրին: Պարզ է, որ կայսրն էլ իր կողմից երախտագիտական մի նշան պիտի անէր դրա դէմ:

Մայիսի 10-ի հրովարտակն է այդ նշանը... Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից հաղորդում են արտասահմանեան լրագիրներին, որ Բ. Դուռը մերժեց Միացեալ-Նահանգների կառավարութեան խնդրը՝ թոյլ տալ հնագիտական ուսումնարան հիմնել Սրուսաղէմում: Որպէս պատճառ իր մերժումն Բ. Դուռը մատնացոյց արաւ այն հանգամանքը, որ զանազան պատմականներով օտարերկրացիները սեփական գաղութականութիւններ են հիմնում թիւրքական նահանգներում եւ որ այսուհետեւ սովորեալ կառավարութիւնը մտադրութիւն չունի թոյլ տալ օտարերկրացիներին շարունակելու նախկին քաղաքականութիւնը: Նոյնպիսի մերժումն ստացան Բ. Դրան կողմից եւ գերմանացիները, որոնք կամենում էին հողեր ձեռք բերել Սրուսաղէմի շրջանում ուսումնարան հիմնելու համար:

—«Mouvement Macédonien» լրագրին գրում են Ադրիանօպոլսից, թէ նահանգապետ Աթրիֆ փաշան արտակարգ իրաւունքներ է ստացել զկառավարելու անձանց վերաբերմամբ: Առանց ամենեւին պատճառք յայտնելու նա բանտարկում է շատ քաղաքների եւ ապա աքսորում Փոքր-Ասիա Մօտ օրերումն նա աքսորեց Փոքր-Ասիա 500 քաղաքների, որոնց մէջ կային նաեւ քահանաներ եւ իրանց չըմանում յայտնի անձնաւորութիւններ: Բանտից եւ քաղաքից այլ եւս ոչ ոք չէ վերադառնում: Եւրօպական դիպլոմատներն եւ մամուլը աչքին թող փնելու նըպատակով են ցոյց տալու համար, թէ Ադրիանօպոլսի նահանգում ամեն տեղ տիրում է խիստ օրինականութիւն, Աթրիֆ փաշա դատի ենթարկեց մի պառու կնոջ, որ անթիւ էր իր որդուն թիւրքական լրտեսի պաշտօն կատարելու համար:

—Դանիական զինուորական «Valkyrien» շրջանաւոր, որ մօտ օրերումն վերադարձել է Ֆորտը-Ֆրանսից Նիւ-Սօրկ, հաղորդել է հետեւեալ մանրամասնութիւնները Մարտինիկա կղզու վրա տեղի ունեցած աղէտի մասին: Երբ Պէլէ հրաբուխը սկսել է գործունէութեան նըշաններ ցոյց տալ Մարտինիկայի նահանգապետ Մուտէ նշանակել է մի մասնագիտով ջննելու Պէլէ սարը Մայիսի 7-ին (ն. տ.) մասնագիտովի անդամները բարձրացել են սարի գլուխը եւ մանրամասն զննել են նրան: Երեւոյթնան նրանք վերադարձել են քաղաք եւ յայտնել, թէ ոչ մի փոխանգ չէ սպանում: Հետեւեալ առաւօտեան, ժամի 7-ին, ստորերկրից սաստիկ հարուածներով յետոյ՝ նկատեցին, որ սարի վրա բացվել է հրաբխային նոր բերան: Ժամի 8-ին յանկարծ այդ բերանից բարձրացաւ մի մութ ամպ եւ նրանից անմիջապէս յետոյ երկրորդ, հրեղէն ամպ: Իսկոյն ամբողջ քաղաքը թաղվեց կրակի լաւայի ու մոխրի յորձանքների մէջ: Տեղի ունեցաւ զազերի զարհուրելի բռնկումն, որ տեւեց 3 վայրկեան: Նահանգապետ Մուտէ սպանվեց մի փոքրիկ նաւակում, որով նա մօտեցել էր հրաբուխի ստորոտին եւ որ զոհ դարձաւ եւ եկած ջրի հեղեղներին: Այժմ արդէն հաստատուեց իմացված է, որ Մէն-Պիէր քաղաքի ամբողջ ազգաբնակչութիւնից ազատվել են միայն 10 հոգի, որոնց աղջկան է մի կերպ փախչել քաղաքից: Նրանք սաստիկ այրուածքներ են ստացել: Ֆորտը-Ֆրանսում ջրի մեծ պակասութիւն է զգացվում: Գիտերը լինեն են դիմակներով: Նրանց տեսքը ապացուցանում է, որ աղէտի օրակէտն ջերմութիւնը հասնում էր 200—300 աստիճան Ցելսիուսի ջերմաստիճանով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷՑ

11 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրի

օգնական Պ. Ն. Դուրնով Դանապարհ ընկաւ Մօսկվա—Մայիսի 11-ին արտասահմանից վերադարձաւ: Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչ—Պրինց Ալբերտ Սակսէն—Ալտէնբուրգի մահվան պատճառով Մէկլէնբուրգում, մայիսի 11-ին Դանապարհ ընկան այնտեղ Գէորգի Գէորգեւիչ եւ Միխայիլ Գէորգեւիչ: Մէկլէնբուրգ-Ստրէլցկի դուքսերը:

ՎԱՐՇԱՎԱ: Զրահեղձ լինելուց ազատող ընկերութեան բաժինը ուղարկ է, Պարիզի նման, վարժված չներ պահել խեղդովոյներին ազատելու համար:

ՊԱՐԻՉ: Լրագիրները խօսում են տօստերի մասին «Figaro» ասում է. «Կապը զօրեղի միջեւ այժմ աւելի հաստատված է, քան երբ եւ իցէ: Թանգագին համաձայնութիւնը եւ անձնական յարաբերութիւնները մտերմութիւնը այժմ աւելի եւս պարզվեցին: Այդպէս է այս չորս օրերի բալանը»—«Petit Parisien» ասում է. «Տօնախմբութիւնները կրկին անգամ ապացուցանում են դաշնակցութեան ամրութիւնը»:

ԲԵՐԼԻՆ: Երէկ կայսր Ալեքսանդրի գունդը տօնեց ուսուց Միապետի ծննդեան օրը: Գրեշապետ Շէնկ շոքի կանչեց Կայսր Նիկոլայ II-ի համար. ուսուց դեսպանը պատասխանեց՝ առաջարկելով Վիլհելմ կայսրի կենացը:

ԼՕՆԴՈՆ: Խաղաղութեան վերաբերեալ բանակցութիւնները Պրէտորիայում մօտենում են իրանց վախճանին: Գլխաւոր կէտերի մասին արդէն պայմանաւորվեցին. մանր կէտերի հարցերը կառավարկվեն անգլիական կառավարութեանը: Անգլիայից պատասխան ստացվելուց յետոյ, բոլորական պատերիսկները ուղեւորվում են Ֆէրէնթիգինգ, որ տեղի կունենայ վերջնական վճիռը:

ՍՈՖԻԱ: Պատասխանելով ծայրայեղ ձախակողմի յարձակումներին Ռուսաստանի վրա, Դանիական իշխան երէկ, որ եթէ Բօլշարիան կը հետեւի կայսրն եւ բարեկամական քաղաքականութեան Ռուսաստանի հետ, այն ժամանակ այդ քաղաքականութեան հետեւանքները չուտով երեւան կը գան Նշանաւոր մեծամասնութիւնը ընդունեց այդ ձառը ծափահարութիւններով:

ԼՕՆԴՈՆ: «Standard» լրագրի տեղեկութիւնների համաձայն, բօլշարից ոչ մի այնպիսի պահանջ չեն անում, որը արգելք դառնար խաղաղութեան դաշն կապելուն: Անկախութեան պահանջը թողնված է որպէս անյուսալի: Կարիւնէտը ձեւակերպեց հետագրի մէջ գլխաւոր կէտերի ջննութեան հետեւանքները: Ներումն չորհրդելու վերաբերեալ հարցը թողնված է թափաւորին: Ինքնավարութեան հարցը կախումն ունի ֆրիկական կօլօնիաների դաշնակցութիւն հաստատուելուց—«Daily News» լրագրի խօսքով: Անգլիան պատասխանեց, որ ինքնավարութեան վերականգնման ժամանակամիջոցը չէ կարող որոշված լինել: Կապի ապստամբները հայածանքի չեն ենթարկվի, բացի սովորական յանցաւորներից: Գէնք ունենալու համար բօլշարից պէտք է վկայականներ ստանան. սեւամորթները չեն ստանալ հաւասար իրաւունքներ սպիտակների հետ: ազգաբնակիչ կառուցանելու համար միջոցներ կը տրվեն—«Daily Telegraph» տեղեկացնում է, որ երկուշաբթի Բալֆօր զեռ չէ կարող զրական տեղեկութիւններ հաղորդել պարլամէնտին:

ՀՌՕՄ: Յօդուտ կամ հակառակ երեքպետեան դաշնակցութեան ճառերից յետոյ Պրինէտտի պատասխանեց իրան՝ առաջարկված հարցերին, թէ Անգլիան տուել է Տրիպոլիսի արեւելեան սահմանի վերաբերմամբ նոյնպիսի հաւատարմութիւններ սահմանի վերաբերմամբ: Ինչ վերաբերում է Ալբանիային, իտալիան եւ Աւստրիան կատարելապէս համաձայն են status quo պաշտպանելու: Գոլուսովալու յայտարարութիւնը երեքպետեան դաշնակցութեան վերաբերմամբ պարզաբանեց հարցի դրութիւնը: Կառավարութիւնները զեռ եւս չը ստորագրեցին զաշնակցութեան վերանորոգումն, բայց դիտաւորութիւն յայտնեցին անել այդ բանը: Կարող են կարծել, որ Ֆրանսիայի հետ համաձայնութիւնը Միջերկրական ծովի վերաբերմամբ պակասեցրեց նրա նշանակութիւնը, բայց դա միակ հիմք չէր այդպիսի քայլի համար: Կային եւ ուրիշ նշանաւոր առիթներ, զոր չորհրդէ, Իտալիան կարող է յոյս ունենալ, որ ոչ մի կօմբինացիա չէ կարող իրադրվել Բալկանեան պետութիւնների մէջ առանց իր գիտութեան կամ ի վնաս նրա: Երեքպետեան դաշնակցութիւնը թշնամական բնակութիւն չունի: Ֆրանսիայի վերաբերմութեամբ, եւ այդ պատճառով ոչինչ բան չէ արգելում իտալա-ֆրանսական բարեկամութեան ապագայ զարգացմանը: Ապա խօսելով

առեւտրական դաշնագիրների մասին, մինիստրը նկատեց, որ անբաւարար կը համարվէր այն քաղաքականութիւնը, որը չէր ապահովի նպատաւոր առեւտրական յարաբերութիւններ:

ԲԵՂԳՐԱՆ: Աւարտված է Ալաւանտիչի գործին վերաբերեալ վկաների հարց ու փորձը: Եօվանովիչ եւ Նիկոլիչ կրկնեցին այն ցուցմունքը, թէ Ալաւանտիչի մահից առաջ մատնացոյց արեց Կարա-Գէորգեւիչի վրա, որպէս ապստամբական փորձի սկզբնապատճառի վրա:

ՊԱՐԻՉ: Նախագահին Ռուսաստանում ցոյց տրված ընդունելութիւնը մեծ տպաւորութիւն է գործում ամբողջ Ֆրանսիայում: Լրագիրները շատ նպատաւոր եղբակցութիւններ են անում ցոյցերի մոլոր մասին «Figaro» մատնացոյց է անում զինուորական կապի հաստատութեան վրա եւ ընդգծում է ուսուց ժողովրդի ցոյց տուած ուրախութիւնը: Հանտօր «Journal» լրագրում ասված է. «Երկու ազգերն եւս իրանց ոգեւորութեամբ վաւերացնում են այն գործը, որ սկսել եւ ամրացրել են Կառավարիչները» «Correspondence» ասում է. «Ռուս ժողովրդական մասսաների հիացմունքները ոչ միայն դժգոյն չէին այն հիացմունքներից, որոնք արտայայտվեցին 1897 թ-ին, այլ 1897 թ-ից յետոյ անցքերը համոզեցին մինչեւ անգամ ամենախիստ հեղքողներին, որ ուսուց ժողովուրդը, խորին հաւատարմութեամբ ներշնչուած դէպի իր Թագաւորը, սրտին մօտ առաւ Ֆրանսիայի պետին եւ ֆրանսիական նաւատորմը տօնելու դէպքը»:

ՊԱՐԻՉ: «Temps» ասում է. «Ֆրանսիան մեծ համակրութեամբ եւ ուշադրութեամբ հետեւում էր ժողովրդական համակրութեան արտայայտմանը եւ բարեկամութեան այն նշաններին, որով ուսուց ժողովուրդը ցոյց էր տալիս Լուրէ-Դէլկաւէին»:

ՎԱՐՇԱՎԱ: Հինգ խումբ ինժեներներ են ուղարկված Վարշավայից Դանապարհի ափային գծերի հետախուզութիւնները ստուգելու համար:

ՄՕՍԿՎԱ: Այսօր վախճանվեց «Московский Лектор» լրագրի խմբագիր Պատուխով:

ԽԵՐՍՕՆ: «Юг» լրագրում տպված է Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօւնայի հեռագիրը, որ ստացել է երէկ ԽԵՐՍՕՆի նահանգապետ Լէվաշով: «Անկեղծ շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ եւ բոլորին աղօթքների եւ Ինձ արտայայտած զգացմունքների համար, Նիկոլայեւիչի ապաստանի գոյութեան յիմնականի սօսախմբութեան առիթով: Սրանց ցանկանում եմ այդ օգնակար հիմնարկութեան առաջդիմութիւնը»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ֆրանսիական հանրապետութեան նախագահ յանձնեց Պետերբուրգ քաղաքին 100,000 ֆրանկ—Ֆինանսների մինիստրութեան կարգադրութեամբ, պետական բանկի ժամանակաւոր բաժանմունքներ կազմվում են Նալայայում մայիսի 25-ից եւ Պետաիդորակում մայիսի 25-ից:

12 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը հրամայեց երկու շաբաթ տուգ պահել Բարձրագոյն պալատում պրինց Ալբերտ Սակսէն—Ալտէնբուրգի մահվան առիթով: Հաղորդակցութեան Դանապարհների մինիստրի օգնական Մեասօ-Էդով-Իվանօւի Դանապարհ ընկնելու պատճառով, նրա պաշտօնը կը կատարէ հաղորդակցութեան Դանապարհների մինիստրի զինանաւան գիրկետօր Երմօլով:

ՕՐԷՕԼ: Այսօր երեկոյեան արագ գնացքով ժամանեց Մօսկվայից Օրէօլ կայարանը Մեծ Իշխան Անգլէյ Վալդիմիրովիչ եւ հարաւարեւելեան երկաթուղիների գնացքով Դանապարհ ընկաւ Տէրբուրգի կայարանը իր սեփական կառուածը Լիվէնի գաւառում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Մեծաւ անգլիական ղեկաւոր Պատենսֆօտ:

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ: Ստորինգը միաձայն ընդունեց յանձնագիտովի առաջարկութիւնը չեղարկութեան մասին:

ԿՕՊԵՆՀԱՆԳԷՆ, «Բերլին, Տիտենտէ» ասում է, որ Լուրէ Ֆրանսիայի պետերից առաջինն է, որ այցելում է դանիական մայրաքաղաքը: Այդ այցելութիւնը հետո է քաղաքական որեւէ տեսչեցնելու: Նախագահ Լուրէի ուշադիր վերաբերմունքը Դանիային դրա համար աւելի եւս ուշադրութեան արժանի է:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Տեղի ունեցաւ մարշալ Բօլաւ-րօի արձանի բացումը, որը 1781 թ-ին մասնակցել է անկախութեան համար սկսված պատերազմին: Նախաձային ֆրանսիական ղեկաւոր Կամբօն յոյս յայտնեց, որ երկու պետութիւնների բարեկամութիւնը այսուհետեւ եւս կը շարունակվի: Բուզվելու յիշեց ֆրանսիացիների մասնակցութիւնը անկախութեան համար

